

2.3 ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ  
ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ  
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ առևտրային կազմակերպությունների հետազոտության ընտրանքն իրականացվել էր 6 տարբեր համակցությունների հիման վրա՝ հետազոտության արդյունքների տարածումը և գլխավոր համակցությունների գնահատումն իրականացվել են նույն 6 տարբեր գլխավոր համակցությունների նկատմամբ:

Հետազոտության մեջ առաջին հինգ խմբերում ընդգրկված 779 (առանց արհեստակցական կազմակերպությունների միությունների) ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ ստացված ցուցանիշները տարածվել են ընտրանքի համար գլխավոր համակցություն հանդիսացած 3137 միավորների վրա:

Ստացված արդյունքների տարածման և գլխավոր համակցության գնահատման համար, համաձայն միջազգային պրակտիկայում կիրառվող մեթոդաբանության, հետազոտված միավորները, նախ և առաջ, առանձնացվել են ըստ հետևյալ հատկանիշների՝

- գործող,
- գործող, սակայն ֆինանսական միջոցների շարժ չունեցող (հետազոտության նպատակների առումով այս խումբը հավասարազոր է չգործող կազմակերպությունների խմբին)
- չգործող,
- գործող, սակայն հետազոտության հարցաթերթի լրացմանը չմասնակցած (մերժում, հաշվապահի կամ ղեկավարի բացակայություն և այլն),
- չհայտնաբերված:

Հետազոտության ընթացքում հայտնաբերված չգործող միավորների ցուցանիշներին տրվել է զրոյական արժեք: Ընտրանքում ընդգրկված և հետազոտությամբ չհայտնաբերված միավորների վերաբերյալ բացակայող անհրաժեշտ ցուցանիշների լրացման համար հիմք է ընդունվել համապատասխան խմբի հայտնաբերված (փաստացի գործող և չգործող) միավորների ցուցանիշների միջին թվաբանականը, իսկ գործող, սակայն հետազոտության հարցաթերթի լրացմանը չմասնակցած միավորների ցուցանիշները գնահատվել են՝ հիմք ընդունելով համապատասխան խմբի փաստացի գործող միավորների ցուցանիշների միջին թվաբանականը:

Հաջորդ քայլով ընտրանքի մեջ ընդգրկված յուրաքանչյուր միավորին շնորհվել է ընտրանքային կշիռ, որը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$W_i = \frac{n_i}{N_i}$$

որտեղ՝

**ni**-ն i-րդ խմբում ընտրանքի մեջ ընդգրկված միավորների քանակն է,

**Ni**-ն գլխավոր համակցության i-րդ խմբում միավորների քանակն է:

Հետազոտության մեջ համատարած հաշվառմամբ ընդգրկված բոլոր միավորներին (բացառությամբ արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միությունների) շնորհվել է ընտրանքային կշռի «1» արժեքը:

Հետազոտության արդյունքների տարածումը և գլխավոր համակցությունների գնահատումն իրականացվել է յուրաքանչյուր միավորի համապատասխան ցուցանիշի և այդ միավորին շնորհված ընտրանքային կշռի արտադրյալների հանրագումարի միջոցով:

Ինչ վերաբերվում է հետազոտության ընտրանքային համակցության վեցերորդ խմբում ընդգրկված արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միությունների կողմից տրամադրված տեղեկություններին, ապա, սպասվածին հակառակ, 26-ի փոխարեն հաջողվել է տեղեկություններ ստանալ միայն դրանցից 19-ից, որոնցից միայն երեքն են կարողացել տեղեկություններ տրամադրել ինչպես իրենց կենտրոնական մարմնի, այնպես էր միության մեջ ընդգրկված արհեստակցական կազմակերպությունների ֆինանսական արդյունքների վերաբերյալ: Վերը նշվածն անհրաժեշտություն առաջացրեց սույն խմբում նույնպես իրականացնել գլխավոր համակցության գնահատման աշխատանքներ:

Այսպես, հիմք ընդունելով 3 ճյուղային միությունների ամբողջական տեղեկատվության համամասնությունները, մնացած 16 միությունների կենտրոնական մարմինների դրամական ելքերի և մուտքերի արդյունքներով գնահատվել են դրանց մեջ մտնող արհեստակցական կազմակերպությունների դրամական ելքերն ու մուտքերը: Մասնավորապես, հաշվի է առնվել, որ կենտրոնական մարմնի եկամուտները կազմում են միության մեջ մտնող կազմակերպությունների եկամուտների մոտ 20 տոկոսը:

Սակայն 19 արհեստակցական կազմակերպությունների միությունների գնահատված տեղեկատվությունը նպատակահարմար չի գտնվել տարածել 26-ի վրա, քանի որ այդ դեպքում հնարավոր էր գնահատականի մեծ շեղման առաջացում (biased estimate):